

Հարցաթերթ

**Աշխարհագրություն առարկայի 2019 թ. դպրոցական օլիմպիադայի
հանրապետական փուլի
(տևողությունը՝ 150 րոպե)**

11 – 12 րդ դասարաններ

1. Ի՞նչ է կաբոտաժը: Այն քանի՞ տիպի է լինում:
Բերել մեկական օրինակ.....1 միավոր

2. Ռուս – ամերիկյան գիտական արշավախումբը մերձբևեռային գոտու էկոլոգիական վիճակը ուսումնասիրելու նպատակով ինքնաթիռով դուրս եկավ Մուրմանսկ քաղաքից (հս. լ. 69°, արլ. ե. 33°) և հյուսիսային բևեռի վրայով ուղևորվեց Այյասկա: Նույն միջօրեականով ինքնաթիռը հասավ հյուսիսային բևեռ և առանց շեղվելու միջօրեականից անցավ Այյասկա և վայրէջք կատարեց Ֆերբանսկ քաղաքում: Արշավախումբն անցավ 5106 կմ ճանապարհ:
Որոշել Ֆերբանսկի աշխարհագրական կոորդինատները՝ աշխարհագրական լայնությունը և երկայնությունը (պատասխանն ստանալ հաշվարկով).....2 միավոր

3. Ինչպե՞ս է որոշվում պետության կամ տարածաշրջանի անտառապատվածությունը:
Այդ ցուցանիշով որո՞նք են աշխարհի առաջատար չորս տարածաշրջանները.....2 միավոր

4. Որո՞նք են գիտատեխնիկական հեղափոխության (ԳՏՀ) երկու հիմնական բնորոշ գծերը: ԳՏՀ – ի արտադրության կատարելագործման ի՞նչ ավանդական ուղիներ գիտեք (թվարկե՛լ առանց մեկնաբանելու).....1 միավոր

5. Կապի համակարգում առանձնացվում են ավանդական և ժամանակակից տեսակներ, որոնք էլ իրենց հերթին բաժանվում են առանձին տեսակների:
Գրել դրանք.....2 միավոր

Ավանդական կապ	Ժամանակակից կապ
1.	1.
2.	2.
3.	3.
4.	4.

6. Ի՞նչ է ջերմոցային էֆեկտը: Թվարկե՛լ ջերմոցային հիմնական գազերը:
Որո՞նք են առավել շատ ջերմոցային գազեր արտանետող երկրներից չորսը.....2 միավոր

7. Գոյություն ունեն միջազգային տնտեսական հարաբերությունների տարբեր ձևեր: Առանց մեկնաբանության նշել դրանցից ուրը..... 2 միավոր

8. Ի՞նչ է էկոհամակարգը, որո՞նք են նրա երկու կարևոր հատկանիշները.....1 միավոր

9. Բացատրել լ «հողային ռեսուրսներ» և «գյուղատնտեսական հողահանդակներ» հասկացությունների տարբերությունը: Ի՞նչ մասերից են բաղկացած գյուղատնտեսական հողահանդակները.....2 միավոր
10. Ի՞նչ է ազգային եկամուտը և ինչպե՞ս է այն հաշվարկվում.....1 միավոր
11. Հայկական լեռնաշխարհի կլիմայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
1. Արեգակի ճառագայթների անկման անկյան տարբերությունը ծայր հյուսիսի և ծայր հարավի միջև մոտ 5⁰ է:
 2. Ամբողջ տարին տիրապետում է օդային զանգվածների արևելյան հոսքը:
 3. Ծայր հարավում, հունիսի 22-ին, կեսօրին, Արեգակի ճառագայթներն ընկնում են ուղղահայաց:
 4. Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը (+45 °) գրանցվել է Թավրիզում:
 5. Միջլեռնային գոգավորություններում ձմռանը երբեմն հաստատվում է ջերմաստիճանային շրջադասություն:
 6. Ամենատաք ամիսը հունիսն է, ամենացուրտը՝ դեկտեմբերը:
12. Բնապահպանության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ..... 1,5 միավոր
1. Մթնոլորտում կախված վիճակում հանդես եկող պինդ և հեղուկ նյութերի մանր փոշենման մասնիկները կոչվում են աերոզոլներ:
 2. Օրգանական նյութեր սինթեզող կենդանի օրգանիզմները կոչվում են կոնսումենտներ:
 3. Մինթեզված օրգանական նյութերով սնվող օրգանիզմները կոչվում են պրոդուցենտներ:
 4. Օրգանական մնացորդները քայքայող, դրանցով սնվող և օրգանական նյութերը անօրգանականի վերափոխող օրգանիզմները կոչվում են ռեդուցենտներ:
 5. Բնական միջավայրի քիմիական աղտոտիչ է ծանր մետաղը:
 6. Միատարր տարածքում բնակվող օրգանիզմների պատմականորեն ստեղծված ամբողջությունը կոչվում է կենսահամակեցություն:
13. Ի՞նչ են կոռպերացումը (համագործակցում) և կոմբինացումը (համակցում) Բերել մեկական օրինակ.....1 միավոր

Պատասխաններ
2019թ. հանրապետական փուլի
/ գնահատման քայլը – 0,25 և 0,5 միավոր /

11 – 12–րդ դասարաններ

1. Կարոտածը ծովային նավերի նավարկությունն է մեկ երկրի նավահանգիստների միջև: Առանձնացնում են մեծ և փոքր կարոտածներ:

Մեծ կարոտածի դեպքում նավարկությունը կատարվում է տվյալ երկրի տարբեր ծովերի նավահանգիստների միջև: Օրինակ, Ռուսաստանում Բալթիկ և Բարենցի ծովերի (Կալինինգրադ և Մուրմանսկ) նավահանգիստների միջև:

Փոքր կարոտածի դեպքում նավարկությունը կատարվում է նույն ծովի տարբեր նավահանգիստների միջև: Օրինակ, Ճապոնական ծովում՝ Վլադիվոստոկ և Նախոդկա նավահանգիստների միջև:

2. Ինքնաթիռն ամբողջ թռիչքի ժամանակ անցել է 46° ճանապարհ (5106 կմ : 111 կմ = 46°), որից 21° -ը՝ Մուրմանսկից մինչև հյուսիսային բևեռ ($90^\circ - 69^\circ = 21^\circ$), իսկ մնացած 25° -ը՝ բևեռից մինչև Ֆերբանսկ: Հետևաբար՝ Ֆերբանսկը գտնվում է հս. լ. 65° -ի վրա ($90^\circ - 25^\circ = 65^\circ$):

Մուրմանսկի աշխարհագրական երկայնության (արլ. ե. 33°) շարունակությունը բևեռի հակառակ կողմում արմ. ե. 147° -ն է ($180^\circ - 33^\circ = 147^\circ$): Հետևաբար, Ֆերբանսկի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս. լ. 65° , արմ. ե. 147° :

3. Անտառների մակերեսի հարաբերությունը պետության կամ տարածաշրջանի ընդհանուր տարածքին կոչվում է անտառապատվածություն: Աշխարհի մասշտաբով այդ ցուցանիշը միջին հաշվով կազմում է 26 %:

Անտառապատվածությամբ առաջատար են.

1. Լատինական Ամերիկան (36 %)
2. Եվրոպան (34 %)
3. Հյուսիսային Ամերիկան (29 %)
4. Ասիան (22 %)

Ճիշտ համարել նաև Աֆրիկան (22 %):

4. ԳՏՀ գլխավոր բնորոշ գծերն են.

ա) գիտության սրընթաց զարգացումը

բ) արտադրության տեխնիկական հիմքի արմատական փոփոխությունը:

ԳՏՀ դարաշրջանում ավանդական ուղիներին են՝ մեքենայացումը, էլեկտրաֆիկացումը և քիմիացումը (ճիշտ համարել նաև ավտոմատացումը):

5.

Ավանդական կապ	Ժամանակակից կապ
1. Ռադիո	1. Հեռապատճենային
2. Հեռախոս	2. Մանրաթելա - օպտիկական
3. Հեռագիր	3. Արբանյակային (տիեզերական)
4. Հեռուստացույց	4. Համացանց

6. Ջերմոցային էֆեկտը մթնոլորտի ստորին շերտի տաքացումն է ջերմոցային գազերի և երկրի մակերևույթից արձակվող երկարալիք ճառագայթների կողմից:

Հիմնական ջերմոցային գազերն են՝ ածխածնի երկօքսիդը (CO_2), մեթանը (CH_4), ազոտի երկօքսիդը (N_2O), օզոնը (O_3) և քլորֆտորածխածինը (CLFCs):

Առավել շատ ջերմոցային գազեր արտանետող երկրներից առաջատար են ԱՄՆ-ը, Չինաստանը, ԵՄ-ը և Ռուսաստանը (ճիշտ համարել նաև Հնդկաստանը, Ճապոնիան):

7. 1. ֆինանսավարկային հարաբերություններ
 2. գիտատեխնիկական համագործակցություն
 3. միջազգային զբոսաշրջություն
 4. արտաքին առևտուր
 5. միջազգային արտադրական համագործակցություն
 6. փոխհատուցման գործարքներ
 7. տնտեսական ազատ գոտիների ստեղծում
 8. տարբեր ծառայությունների մատուցում:

8. Կենդանի օրգանիզմների և նրանց բնակեցման միջավայրի ամբողջությունը կոչվում է էկոհամակարգ: Նրա գլխավոր հատկանիշներն են ինքնակարգավորումը և ինքնավերականգնումը:

9. Երկրագնդի հողային ռեսուրսներն ընդգրկում են նրա ողջ ցամաքային տարածքը՝ 149 մլն. կմ² կամ 14,9 մլրդ. հեկտար: Իսկ գյուղատնտեսական հողահանդակները կազմում են երկրագնդի հողային ռեսուրսների միայն 1/3-ը՝ մոտ 4,8 մլրդ. հեկտար: Դրա մեջ մտնում են վարելահողերը, արոտավայրերը, բազմամյա տնկարկները, բնական մարգագետինները, խոտհարքերը:
10. Ազգային եկամուտը տվյալ փուլում (մեկ տարում) միասնական ազգային արտադրանքն է: Այն հավասար է երկրի ամբողջ բնակչության կողմից մեկ տարում արտադրված ընդհանուր արժեքին: Ազգային եկամուտը հաշվարկվում է՝ միագումար ազգային արտադրանքից հանելով արտադրության մեջ ներդրված հումքի, էներգիայի, նյութական ռեսուրսների և այլնի ծախսերը:
11. 1. ճիշտ է, 2. սխալ է, 3. սխալ է, 4. ճիշտ է, 5. ճիշտ է, 6. սխալ է
12. 1. ճիշտ է, 2. սխալ է, 3. սխալ է, 4. ճիշտ է, 5. ճիշտ է, 6. ճիշտ է
13. Կոոպերացումը արտադրության կազմակերպման ձև է, որի ժամանակ արտադրանքի թողարկմանը մասնակցում են մի շարք ձեռնարկություններ: Այն շատ բնորոշ է մեքենաշինությանը և հատկապես՝ ավտոմեքենաշինությանը:
- Կոմբինացումը տեխնոլոգիական գործընթացներով իրար հետ կապված, երբեմն արդյունաբերական տարբեր ճյուղերին պատկանող արտադրությունների միավորումն է մեկ ձեռնարկության մեջ: Այն բնորոշ է մետաղաձուլությանը (լրիվ ցիկլի կոմբինատ), անտառարդյունաբերությանը (անտառարդյունաբերական համալիր), քիմիական արդյունաբերությանը (քիմիական կոմբինատ):

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թ. Գրիգորյան